Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

7 մարտի 2019 թվականի

Ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակի և դեկանատների ու ամբիոնների խնդիրների մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակը և դեկանատների ու ամբիոնների խնդիրները»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. փորձառությունների պատշաճ կազմակերպման նպատակով 2018-2019 ուսումնական տարում շարունակվել են կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման աշխատանքները, կնքվել են նոր պայմանագրեր համալսարանի հետ համագործակցող պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների հետ: Շարունակական կրթության և կարիերայի բաժինը և թողարկող ամբիոնները որոշակի ջանքեր են գործադրել ուսանողների փորձառության վայրերի ընտրության ուղղությամբ:

2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում կազմակերպվել են ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառություններ, որտեղ ընդգրկվել է 1768 ուսանող, այդ թվում շուրջ 2/3-ը՝ խոշոր կազմակերպություններում՝ համալսարանի և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա:

Փետրվարի 11-ից մինչև ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածում ուսումնաարտադրական փորձառություն են անցնելու բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1020 և հեռակա ուսուցման համակարգի 388 ուսանողներ: Փետրվարի 11-ից մինչև ապրիլի 19-ն ընկած ժամանակահատվածում գիտահետազոտական փորձառություն են անցնելու մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի360 ուսանող:

Անցած ուսումնական տարիներին փորձառության արդյունավետ կազմակերպման խոչընդոտները պայմանականորեն բաժանվել են երեք խմբի.

1) կազմակերպական,
2) բովանդակային,
3) հսկողության և գնահատման:

Այս ուսումնական տարում ևս հիմնական ուշադրությունը սևեռվել է կազմակերպական հարցերին, այդուհանդերձ, իրավիճակը նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ մի փոքր անգամ չի բարելավվել: Չեն նվազել փորձառության անցկացման առաջին օրերին ի հայտ եկող կազմակերպման բացթողումները, երբ փորձառության անցկացման համար այս կամ այն կազմակերպությունում կազմակերպվում են հարցազրույցներ և դրանց մեր ուսանողները տեղյակ են լինում կամ ներկայանում են միայն փորձառության առաջին օրը: Բացի այդ, կազմակերպությունները հաճախ տարբեր պատճառաբանություններով ուսանողների հաճախումների անհատական ժամանակացույցեր են կազմում (կանչում են շաբաթական մեկ-երկու անգամ) կամ հետ են ուղարկում, ինչի պատճառով էլ ի հայտ են գալիս ուշացած նամակ-ուղեգրերը, փորձառության վայրի փոփոխության հետ կապված դժվարությունները: Փորձառության ցածր արդյունավետությանը նպաստում է նաև ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի թեմաների անհամապատասխանությունը փորձառության վայրի գործունեությանը:

Մասնագիտական ամբիոնների մի մասը որոշակի աշխատանքներ է կատարել փորձառությունների ծրագրերի փոփոխության ասպարեզում, սակայն դրանք որևէ էական տեղաշարժ չեն ապահովել և չէին էլ կարող: Փորձառությունների ծրագրերը նորովի մշակելու անհրաժեշտություն կա: Դրանցում ներառված հարցերը դեռևս միտված չեն ուսանողների կիրառական հմտությունների աճին, խմբային աշխատանք կատարելու ունակությունների զարգացմանը:

Ամփոփելով նշենք, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս ուսումնական տարում առավել կարևորվել են կազմակերպական խնդիրները, որոնց գերազանց լուծման դեպքում անգամ փորձառությունների արդյունավետությունը նկատելիորեն չի բարձրանալու, քանի որ դրանց ծրագրերի մշակման և կազմակերպման ձևերի հիմնական սկզբունքները մշակվել են դեռևս նախորդ դարի 60-ական թվականներին և մինչ օրս բովանդակային էական փոփոխության չեն ենթարկվել, չեն համապատասխանեցվել այժմյան պահանջներին:

Ակնհայտ է, որ ուսումնական գործընթացի կարևոր բաղկացուցիչ է ուսանողների փորձառությունը, որի արդյունավետ կազմակերպումը երաշխավորում է ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների ձևավորումը: Ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված կրթական բարեփոխումները թելադրում են, որ համապատասխան փոփոխություններ իրականացվեն ինչպես բուհ-կազմակերպություն համագործակցության ձևաչափերում, այնպես էլ փորձառության ծրագրերում և կազմակերպման ձևերում: Կարծում ենք, որ արմատական փոփոխության կարիք ունեն ինչպես փորձառությունների անցկացման նպատակները, փորձառությունների ծրագրերի բովանդակությունը, այնպես էլ կազմակերպման ձևերը:

Այժմյան ավարտական կուրսերի արդեն նախկին կրթական ծրագրերը մշակվել են 2009 թվականին հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների հիման վրա (իրականում չգործող) և դրանցում

չեն եղել փորձառություններին, դրանց նպատակներին և բովանդակությանը ներկայացվող որոշակի պահանջներ, ինչն էլ փորձառությունների ոչ արդյունավետ կազմակերպման և անցկացման հիմնական պատճառն է մինչ այժմ:

Միևնույն ժամանակ, 2016-2017 թվականներին կրթական վերջնարդյունքների հիման վրա մեր համալսարանի մշակած նոր կրթական ծրագրերում ևս հստակորեն չեն առանձնացվել այն վերջնարդյունքները, որոնց ձեռքբերումը որոշակիորեն պայմանավորված է փորձառություններով: Դա կարևոր բացթողում է և այն անհրաժեշտ է շտկել մինչև հաջորդ ուսումնական տարվա փորձառությունների կազմակերպումը:

Փորձառությունն արդյունավետ կազմակերպելու, առկա թերությունները վերացնելու նպատակով համալսարանի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման բնագավառում կատարված աշխատանքը վերապահումով գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել գիտական խորհրդին կից համալսարանական ուսումնամեթոդական հանձնաժողովին՝**

1) մինչև 2019 թվականի մայիսի 31-ը մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել փորձառությունների նպատակների և բովանդակության նոր հայեցակարգային շրջանակները, ինչպես նաև տվյալ մասնագիտության կրթական ծրագրում ամրագրված վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված փորձառությունների կազմակերպման նոր մոտեցումներն ամրագրող ներքին նորմատիվային փաստաթուղթ:

3. **Հանձնարարել մասնագիտական ամբիոնների վարիչներին՝**

1) գիտական խորհրդին կից համալսարանական ուսումամեթոդական հանձնաժողովի կողմից մշակվող փաստաթղթի հիման վրա արդիականացնել փորձառությունների ծրագրերը, դրանք համապատասխանեցնել կրթական բարեփոխումների նոր պահանջներին և մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը ուսումնական բաժին ներկայացնել փորձառությունների նորացված ծրագրերը.
2) պահանջել ղեկավարներից, որ փորձառության ընթացքում պարբերաբար լինեն փորձառության վայրերում ինչպես ծրագրով տրված հանձնարարականների կատարման ընթացքը հսկելու, այնպես էլ կազմակերպություններից նշանակված ղեկավարների հետ փորձառության արդյունավետության բարձրացման գործնական հարցերը քննարկելու համար.

3) բացառել փորձառությանը չհաճախող ուսանողների հաշվետվություն ներկայացնելու և պաշտպանելու հնարավորությունը.
4) բացառել փորձառության վայրի և ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի թեմաների անհամապատասխանությունը:

4. Հանձնարարել ուսումնական բաժնին՝

1) ժամանակային և բովանդակային վերահսկողություն սահմանել բոլոր մասնագիտություններով փորձառությունների ծրագրերն արմատապես փոխելու, դրանք կրթական ծրագրերում ամրագրված վերջնարդյունքներին համապատասխանեցնելու նկատմամբ:

5. Սույն որոշումը քննարկել դեկանատների և մասնագիտական ամբիոնների նիստերում ու համապատասխան աշխատանքներ կատարել նշված հանձնարարականների կատարման համար:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. մարտի 7
Երևան